Կ-1086-26.05.2025-ՏՀ-011/1

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

(Լրամշակված նախագիծ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 49-րդ և 50-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**49) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ՝** տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման տարածքի սահմաններից, գետառողղատից օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների դուրս բերումը ընդերքից.

50) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվություն՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ գետերի հուների արգելապատնեշների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով տվյալ օբյեկտի կառուցման տարածքի սահմաններում ընդերքի տեղամասից ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ կատարելու իրավունք.».

2) 56-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «. » կետադրական նշանով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 57-րդ կետ.

«**57) գետի հունի արգելապատնեշ՝** երկաթբետոնե կամ մետաղական կոնստրուկցիաներով կահավորված ինժեներական կառույց, գետի ափերը ալիքների քայքայող ներգործությունից պաշտպանելու և գետի հունի խախտումը բացառելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.6-րդ մասում «10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինն սկսում է ստուգման գործընթացը և լիազոր մարմնին տեղեկացնում տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ» բառերը փոխարինել «5-օրյա ժամկետում բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը լիազոր մարմնին տեղեկացնում է տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 28-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «. » կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ և 30-րդ կետեր.

«29) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (Գլոբալ Տեղորոշման Համակարգ, այսուհետ՝ ՋիՊիԷս (GPS)) համակարգով կահավորելու և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու պայմանների, ինչպես նաև նշյալ համակարգով ստացվող տվյալներին հասանելիություն ունեցող մարմինների ցանկի, տվյալների մշակման ու փոխանակման կարգի, համակարգի անվտանգության ապահովման պահանջների, համակարգից օգտվելու կարգի և համակարգի շահագործման կանոնների սահմանումը.

30) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերևակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում իրականացնելու վերաբերյալ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում համաձայնությունների տրամադրման կարգը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված հատուկ նշանակության սահմանային հողերում օգտակար հանածոյի արդյունահանման համար հողամասի նպատակային նշանակության փոփոխություն չի պահանջվում: Սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերևակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում կարող է իրականացվել միայն նշված տարածքներում ընդերքօգտագործում իրականացնելու վերաբերյալ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունների առկայության դեպքում: Տրված համաձայնությունները կարող են ներկայացվել լիազոր մարմին համապատասխան բնագավառի լիազորված մարմնի համաձայնության տրամադրման օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:»:

Հոդված 5. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2.1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ կետերով.

«3.2) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորելու և այդ տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժի անխափան արձանագրվելու գործընթացի ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը, սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 34-րդ կետում սահմանված պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, նույն մասի 35-րդ կետում նշված տեղեկատվության և այդ տեխնիկական ու տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող ՋիՊիԷս (GPS) համակարգով միացված համապատասխան սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիության ստացումը.

3.3) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն

տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի վերաբերյալ վերահսկողության իրականացումը.

3.4) ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների կողմից սահմանային շերտում սահմանային գետի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերով համապատասխան գրությունը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, վարչական վարույթի հարուցման նախաձեռնումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 60.[1]-ին հոդվածի 8-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ հարցը քննության առնելու նպատակով.»:

Հոդված 6. Օրենսգրքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սահմանային շերտում սահմանային գետերի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանումը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2.4.-րդ և 2.5.-րդ մասեր.

«2.4. Սահմանային շերտում սահմանային գետի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքում ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի որոշմամբ կասեցվում է մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործով կայացված որոշման

անբողոքարկելի դառնալը: Ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու վերաբերյալ բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

2.5. Սույն հոդվածի 2.4.-րդ մասով նախատեսված դեպքում ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու նպատակով ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին են ներկայացնում համապատասխան գրություն՝ հիմնավորող փաստաթղթերով: Տեսչական մարմինը փաստաթղթերն ուսումնասիրում և ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է դրանք ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

2) 3-րդ մասում «հիմքերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 32-րդ կետով սահմանված պարտավորության խախտման դեպքերի, որի պարագայում զգուշացման հիմքերի վերացման ժամկետը հանդիսանում է 10 օր».

3) 5-րդ մասի 3-րդ կետում «(մինչև 90 օր» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 32-րդ կետով սահմանված պարտավորության խախտման դեպքում՝ մինչև 10 օր» բառերը.

4) 5-րդ մասում՝

ա. 9-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-11-րդ կետեր.

«10) սահմանային շերտում սահմանային գետերի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել է՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող

տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

11) սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները ՋիՊիԷս (GPS) համակարգով չկահավորված կամ այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան չմիացված՝ հանութաբարձիչ, հանութափոխադրիչ տեխնիկական միջոցներով իրականացնելու կամ արդյունահանված օգտակար հանածոն բեռնատար ավտոմոբիլով տեղափոխելու դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել է՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) սահմանային հողերում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքերևակումներից օգտակար հանածոյի պաշարների հայտնաբերման ու գնահատման կամ վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունները:»:

Հոդված 9. Օրենսգրքի 40-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքերևակումներից օգտակար հանածոյի պաշարների հայտնաբերման ու գնահատման կամ վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական լիազորված մարմինների համաձայնություններից որևէ մեկի բացակայության դեպքում ներկայացված դիմումը

ենթակա է վերադարձման: Լիազոր մարմինը ներկայացված փաստաթղթերի փաթեթը 5-օրյա ժամկետում վերադարձնում է դիմումատուին՝ նշելով վերադարձման պատճառը: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված վերադարձման պատճառը: Եթե վերադարձման պատճառը սահմանված ժամկետում չի վերացվում և լրակազմ փաստաթղթերի փաթեթը չի ներկայացվում լիազոր մարմին, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 48.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերում, 4-րդ մասի 4-րդ կետում և 6-րդ մասի 3-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 48.4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերը.

2) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) գետերի հունների արգելապատնեշների կառուցման նպատակով արդյունահանման աշխատանքների մեկնարկի օրվա, արդյունահանման աշխատանքների իրականացման տևողության (ժամկետի) և արդյունահանման ծավալների վերաբերյալ գրավոր իրազեկել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնին և բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին, արդյունահանման աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) սահմանային հողերում և սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունները:»:

Հոդված 13. Օրենսգրքի 51-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական լիազորված մարմինների համաձայնություններից որևէ մեկի բացակայության դեպքում ներկայացված դիմումը ենթակա է վերադարձման: Լիազոր մարմինը ներկայացված փաստաթղթերի փաթեթը 5-օրյա ժամկետում վերադարձնում է դիմումատուին՝ նշելով վերադարձման պատճառը: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված վերադարձման պատճառը: Եթե վերադարձման պատճառը սահմանված ժամկետում չի վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 14. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) 31-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «. » կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ կետեր.

«32) սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները իրականացնել բացառապես ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված՝ հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցներով, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլներով.

33) վերահսկել և ապահովել սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված հանութաբարձիչ, հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի անխափան արձանագրվելու գործընթացը.

34) կնքել համապատասխան պայմանագիր՝ սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական

միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորելու, նշված տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող համապատասխան սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու և սույն մասի 35-րդ կետում նշված տեղեկատվությունը կառավարության կողմից սահմանված տվյալներին հասանելիություն ունեցող մարմիններին տրամադրելու ծառայության մասին՝ համապատասխան ծառայություն մատուցող անձի հետ, եթե սույն կետում և սույն մասի 35-րդ կետում նշված պայմանները օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձը անձամբ չի իրականացնում.

35) սույն մասի 34-րդ կետում նշված պայմանագրի կնքման դեպքում՝ ծառայություն մատուցող անձի համար սահմանել պարտականություն՝ սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի արձանագրման մասին մինչև մեկ տարվա վաղեմությամբ տեղեկատվությունը պահպանելու և հարցման դեպքում այդ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում կառավարության կողմից սահմանված տվյալներին հասանելիություն ունեցող մարմիններին տրամադրելու, ինչպես նաև նշյալ մարմիններին նշված տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիություն տրամադրելու մասին: Այն պարագայում, երբ սույն կետում և սույն մասի 34-րդ կետում նշված պայմանները անձամբ իրականացվում են օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձի կողմից, ապա սույն կետում նշված տեղեկության պահպանումը, դրա տրամադրումը և նշված սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիության տրամադրումը նույնպես իրականացվում է օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձի կողմից:»:

Հոդված 15. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ և 59-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ և 26-րդ կետերում «և ավազակոպճային խառնուրդի» բառերը փոխարինել «ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի» բառերով:

Հոդված 16.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կառավարությունը ընդունում է սույն օրենքն ընդունվելուց հետո՝ ութ ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով՝ Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2.1-ին մասում լրացվող 3.2-րդ, 3.3-րդ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով՝ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում լրացվող 11-րդ կետը, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ կետերը գործելու են սույն հոդվածի 2-րդ մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված դրույթների կիրառությունը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ընդունումը տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների հիմքով ծագած հարաբերությունների վրա: Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կառավարության կողմից ընդունելուց հետո 90-օրյա ժամկետում ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել սույն հոդվածի 3-րդ մասում նշված դրույթներում սահմանված պարտականությունների կատարումը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

(Լրամշակված նախագիծ)

ՆԱԽԱԳԻԾ

Կ-1086-26.05.2025-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

2) 49-րդ և 50-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**49) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ՝** տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման տարածքի սահմաններից, գետառողղատից օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների դուրս բերումը ընդերքից.

50) ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվություն՝ տրանսպորտային կամ հաղորդակցության ուղիների կամ թունելների կամ ջրամբարների կամ գետերի հուների արգելապատնեշների կամ կարևորագույն նշանակության օբյեկտ հանդիսացող ստորգետնյա պահեստարանների կառուցման կամ շահագործման նպատակով տվյալ օբյեկտի կառուցման տարածքի սահմաններում ընդերքի տեղամասից ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթ կատարելու իրավունք.».

2) 56-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 57-րդ կետով.

«**57) գետի հունի արգելապատնեշ՝** երկաթբետոնե կամ մետաղական կոնստրուկցիաներով կահավորված ինժեներական կառույց, գետի ափերը ալիքների քայքայող ներգործությունից պաշտպանելու և գետի հունի խախտումը բացառելու համար:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.6-րդ մասում «10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինն սկսում է ստուգման գործընթացը և լիազոր մարմնին տեղեկացնում տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ» բառերը փոխարինել «5-օրյա ժամկետում բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը լիազոր մարմնին տեղեկացնում է տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ ~~մասը~~ մասում՝

1) 28-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ և 30-րդ ~~կետով~~ կետեր.

«29) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (Գլոբալ Տեղորոշման Համակարգ, այսուհետ՝ ՋիՊիԷս (GPS)) համակարգով կահավորելու և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու պայմանների, ինչպես նաև նշյալ համակարգով ստացվող տվյալներին հասանելիություն ունեցող մարմինների ցանկի, տվյալների մշակման ու փոխանակման կարգի, համակարգի անվտանգության ապահովման պահանջների, համակարգից օգտվելու կարգի և համակարգի շահագործման կանոնների սահմանումը.

30) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերևակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում իրականացնելու վերաբերյալ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում համաձայնությունների տրամադրման կարգը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված հատուկ նշանակության սահմանային հողերում օգտակար հանածոյի արդյունահանման համար հողամասի նպատակային նշանակության փոփոխություն չի պահանջվում: Սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքերևակումներում և հանքավայրերում ընդերքօգտագործում կարող է իրականացվել միայն նշված տարածքներում ընդերքօգտագործում իրականացնելու վերաբերյալ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունների առկայության դեպքում: Տրված համաձայնությունները կարող են ներկայացվել լիազոր մարմին համապատասխան բնագավառի լիազորված մարմնի համաձայնության տրամադրման օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:»:

Հոդված 5. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2.1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ կետերով.

«3.2) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորելու և այդ տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժի անխափան արձանագրվելու գործընթացի ապահովման նկատմամբ վերահսկողության իրականացումը, սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 34-րդ կետում սահմանված պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, նույն մասի 35-րդ կետում նշված տեղեկատվության և այդ տեխնիկական ու տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող ՋիՊիԷս (GPS) համակարգով միացված համապատասխան սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիության ստացումը.

3.3) սահմանային շերտում և սահմանային գետի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն

տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի վերաբերյալ վերահսկողության իրականացումը.

3.4) ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների կողմից սահմանային շերտում սահմանային գետի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերով համապատասխան գրությունը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում, վարչական վարույթի հարուցման նախաձեռնումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 60.[1]-ին հոդվածի 8-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ հարցը քննության առնելու նպատակով.»:

Հոդված 6. Օրենսգրքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սահմանային շերտում սահմանային գետերի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի)~~գետավազի~~ արդյունահանումը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2.4.-րդ և 2.5.-րդ մասեր.

«2.4. Սահմանային շերտում սահմանային գետի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքում ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի որոշմամբ կասեցվում է մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործով կայացված որոշման

անբողոքարկելի դառնալը: Ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու վերաբերյալ բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

2.5. Սույն հոդվածի 2.4.-րդ մասով նախատեսված դեպքում ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու նպատակով ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին են ներկայացնում համապատասխան գրություն՝ հիմնավորող փաստաթղթերով: Տեսչական մարմինը փաստաթղթերն ուսումնասիրում և ընդերքօգտագործողի նախատեսված գործունեությունը կասեցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է դրանք ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

2) 3-րդ մասում «հիմքերը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 32-րդ կետով սահմանված պարտավորության խախտման դեպքերի, որի պարագայում զգուշացման հիմքերի վերացման ժամկետը հանդիսանում է 10 օր».

3) 5-րդ մասի 3-րդ կետում «(մինչև 90 օր» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 32-րդ կետով սահմանված պարտավորության խախտման դեպքում՝ մինչև 10 օր» բառերը.

4) 5-րդ ~~մասը~~ մասում՝

ա.9-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

բ.լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-11-րդ կետեր~~ով~~.

«10) սահմանային շերտում սահմանային գետերի գետաողողատային տիպի հանքավայրերից ավազ (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդ) արդյունահանող ընդերքօգտագործողի կողմից տվյալ գետի հունից ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) արդյունահանման դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել է՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող

տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

11) սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները ՋիՊիԷս (GPS) համակարգով չկահավորված կամ այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան չմիացված՝ հանութաբարձիչ, հանութափոխադրիչ տեխնիկական միջոցներով իրականացնելու կամ արդյունահանված օգտակար հանածոն բեռնատար ավտոմոբիլով տեղափոխելու դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել է՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին:»:

Հոդված 8. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) սահմանային հողերում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքերևակումներից օգտակար հանածոյի պաշարների հայտնաբերման ու գնահատման կամ վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունները:»:

Հոդված 9. Օրենսգրքի 40-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքերևակումներից օգտակար հանածոյի պաշարների հայտնաբերման ու գնահատման կամ վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության դեպքում՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական լիազորված մարմինների համաձայնություններից որևէ մեկի բացակայության դեպքում ներկայացված դիմումը

ենթակա է վերադարձման: Լիազոր մարմինը ներկայացված փաստաթղթերի փաթեթը 5-օրյա ժամկետում վերադարձնում է դիմումատուին՝ նշելով վերադարձման պատճառը: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված վերադարձման պատճառը: Եթե վերադարձման պատճառը սահմանված ժամկետում չի վերացվում և լրակազմ փաստաթղթերի փաթեթը չի ներկայացվում լիազոր մարմին, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 48.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերում, 4-րդ մասի 4-րդ կետում և 6-րդ մասի 3-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերը:

Հոդված 11. Օրենսգրքի 48.4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունների արգելապատնեշների» բառերը.

2) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) գետերի հունների արգելապատնեշների կառուցման նպատակով արդյունահանման աշխատանքների մեկնարկի օրվա, արդյունահանման աշխատանքների իրականացման տևողության (ժամկետի) և արդյունահանման ծավալների վերաբերյալ գրավոր իրազեկել ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնին և բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին, արդյունահանման աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ:»:

Հոդված 12. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը ~~կետը~~ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12) սահմանային հողերում և սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ ազգային անվտանգության, արտաքին գործերի և պաշտպանության բնագավառների, իսկ մաքսային հսկողության գոտու կարգավիճակ ունեցող տարածքներում՝ նաև մաքսային բնագավառի պետական լիազորված մարմինների՝ իրենց իրավասությունների շրջանակներում տրված համաձայնությունները:»:

Հոդված 13. Օրենսգրքի 51-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-ին մասով.

«1.1. Սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պետական լիազորված մարմինների համաձայնություններից որևէ մեկի բացակայության դեպքում ներկայացված դիմումը ենթակա է վերադարձման: Լիազոր մարմինը ներկայացված փաստաթղթերի փաթեթը 5-օրյա ժամկետում վերադարձնում է դիմումատուին՝ նշելով վերադարձման պատճառը: Դիմումատուն ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, վերացնում է նշված վերադարձման պատճառը: Եթե վերադարձման պատճառը սահմանված ժամկետում չի վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:»:

Հոդված 14. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ ~~մասը~~ մասում՝

1) 31-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 32-րդ, 33-րդ, 34-րդ և 35-րդ կետեր~~ով~~.

«32) սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները իրականացնել բացառապես ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված՝ հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցներով, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլներով.

33) վերահսկել և ապահովել սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորված հանութաբարձիչ, հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի անխափան արձանագրվելու գործընթացը.

34) կնքել համապատասխան պայմանագիր՝ սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներն իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական

միջոցները, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլները ՋիՊիԷս (GPS) համակարգով կահավորելու, նշված տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող համապատասխան սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու և սույն մասի 35-րդ կետում նշված տեղեկատվությունը կ~~Կ~~առավարության կողմից սահմանված տվյալներին հասանելիություն ունեցող մարմիններին տրամադրելու ծառայության մասին՝ համապատասխան ծառայություն մատուցող անձի հետ, եթե սույն կետում և սույն մասի 35-րդ կետում նշված պայմանները օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձը անձամբ չի իրականացնում.

35) սույն մասի 34-րդ կետում նշված պայմանագրի կնքման դեպքում՝ ծառայություն մատուցող անձի համար սահմանել պարտականություն՝ սահմանային շերտում և սահմանային գետերի ափերին գտնվող հանքավայրերում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ իրականացնող հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տեխնիկական միջոցների, օգտակար հանածոն տեղափոխող բեռնատար ավտոմոբիլների տեղաշարժի արձանագրման մասին մինչև մեկ տարվա վաղեմությամբ տեղեկատվությունը պահպանելու և հարցման դեպքում այդ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ~~Կառավարության~~ կառավարության կողմից սահմանված տվյալներին հասանելիություն ունեցող մարմիններին տրամադրելու, ինչպես նաև նշյալ մարմիններին նշված տեխնիկական, տրանսպորտային միջոցների տեղաշարժը արձանագրող սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիություն տրամադրելու մասին: Այն պարագայում, երբ սույն կետում և սույն մասի 34-րդ կետում նշված պայմանները անձամբ իրականացվում են օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձի կողմից, ապա սույն կետում նշված տեղեկության պահպանումը, դրա տրամադրումը և նշված սերվերային ենթակառուցվածքին շուրջօրյա հասանելիության տրամադրումը նույնպես իրականացվում է օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստացած անձի կողմից:»:

Հոդված 15. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ և 59-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ և 26-րդ կետերում «և ավազակոպճային խառնուրդի» բառերը փոխարինել «(ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի)» բառերով:

Հոդված 16. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ~~Կառավարությունը սահմանում~~ կառավարությունն ընդունում է սույն օրենքն ընդունվելուց ~~ուժի մեջ մտնելուց~~ հետո՝ ութ ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով՝ Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2.1-ին մասում լրացվող 3.2-րդ, 3.3-րդ ~~և 3.4-րդ~~ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով ~~կետով~~՝ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում լրացվող 11-րդ կետը, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով~~հոդվածով~~ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող ~~լրացվող~~ 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ կետերը գործելու են սույն հոդվածի 2-րդ մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված դրույթների կիրառությունը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ընդունումը տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների հիմքով ծագած հարաբերությունների վրա: Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ~~Կառավարության~~ կառավարության կողմից ~~սահմանելուց~~ ընդունվելուց հետո 90-օրյա ժամկետում ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել սույն հոդվածի 3-րդ մասում նշված դրույթներում սահմանված պարտականությունների կատարումը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ-ՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1086-26.05.2025-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-1086[1] -26.05.2025-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-1086-26.05.2025-ՏՀ-011/1)					
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի՝ 1-ին հոդված, 3-րդ հոդված, 7-րդ հոդված, 14-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, 3-րդ հոդվածի 1-ին մասում, 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 14-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված լրացումների արդյունքում անհրաժեշտություն է առաջանում լրացումներին նախորդող դրույթներում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով: Առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել և վերանայել համարակալումը:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի՝ 1-ին հոդված, 7-րդ հոդված, 14-րդ հոդված	Լրամշակված նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կետով» բառը փոխարինել «կետ» բառով, իսկ 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետում և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			րդ կետում «կետերով» բառը փոխարինել «կետեր» բառով՝ շտկելով վրիպակները:		
3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 3-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Նախագծում արդեն իսկ առկա են 29-րդ և **30-րդ կետերը,** անհրաժեշտ է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել՝ «29-րդ կետով» բառերը փոխարինելով «29-րդ և 30-րդ կետեր» բառերով: Միաժամանակ առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող 29-րդ կետում կիրառվող «սերվերային ենթակառուցվածքին միացված լինելու» ձևակերպումը փոխարինել «սերվերային ենթակառուցվածքին անխափան միացված լինելու» ձևակերպմամբ, նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**
4.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 26-րդ հոդվածում լրացող նոր 4-րդ մասում առաջարկվում է «գետավազի» բառը փոխարինել «ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի)» բառերով, նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

			նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները:		
5.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 12-րդ հոդված	Նախագծի 12-րդ հոդվածից հանել կրկնվող «կետը» բառը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
6.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 14-րդ հոդված, 16-րդ հոդված	Նախագծի 14-րդ և 16-րդ հոդվածներում առաջարկվում է «Կառավարություն» բառը (նաև դրա հոլովաձևերը) փոխարինել «կառավարություն» բառով (համապատասխան հոլովաձևերով)՝ հաշվի առնելով, որ Օրենսգրքում կիրառվում է «(այսուհետ՝ կառավարություն)» ձևակերպումը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
7.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 15-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 15-րդ հոդվածում (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) ձևակերպումը շարադրել չակերտներում, նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
8.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 16-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 16-րդ հոդվածի՝ 1) վերնագիրը հանել, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, 2) 2-րդ մասում «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաև «կառավարությունը սահմանում է» բառերը փոխարինել	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			«կառավարությունն ընդունում է» բառերով և «ուժի մեջ մտնելուց» բառերը փոխարինել «ընդունվելուց» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները: 3) 3-րդ մասում «կետով» բառը փոխարինել «կետի «բ» ենթակետով» բառերով, իսկ «հոդվածով» բառը՝ «հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերով, նկատի ունենալով ամփոփաթերթի 1-ին կետում նշված փոփոխությունների կատարումը, ինչպես նաև հանել կրկնվող «լրացնել» բառը: Միաժամանակ առաջարկվում է հանել «և 3.4-րդ» ձևակերպումը՝ հաշվի առնելով նշված կետով սահմանված դրույթի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսելու աննպատակահարմարությունը: 4) 4-րդ մասում սահմանելուց» բառը փոխարինել «ընդունվելուց» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջները:		
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-10861-26.05.2025-ՏՀ-011/1)					
1.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված	Նշյալ նախագծի 1-ին հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» բառերից հետո առաջարկվում է լրացնել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» ձևակերպումը՝ հաշվի առնելով լրամշակված նախագծի 2-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, որով առաջանում է նշյալ օրենսգրքին հղում կատարելու անհրաժեշտություն:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**

2.	***ՀՀ կառավարություն***	1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 60.[1]-ին հոդվածի 10-րդ մասում առաջարկվում է ուղղել վրիպակը՝ «օգտակար» բառը փոխարինելով «Օգտակար» բառով:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
3.	***ՀՀ կառավարություն***	2-րդ հոդված	Հաշվի առնելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում կատարվող փոփոխություններով ընդերքօգտագործման որոշ կանոնների խախտումների համար (60[1] հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր) սահմանված տուգանքների սահմանաչափերը բարձրացվում են, ինչպես նաև սահմանվում են նոր վարչական պատասխանատվության հիմքեր (60[1] հոդվածի 8-րդ և 10-րդ մասեր), հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2026 թվականի հուլիսի 1-ը, բացառություն սահմանելով Օրենսգրքի 60[1] հոդվածի 9-րդ մասի համար, որն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 29-րդ կետով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**